



ՊԱՆԹԷՈՆ ՀՌՈՎԱԿԱՆ

Հռովմէական հնութեանց պատկերներէն մին համարուած է Պանթէոնն կամ Ամենադից տաճարն, զոր Մ. Ագրիպպաս՝ Աւգոստոսի փեսան՝ կառուց, իւր երրորդ անգամ բոլորեց իր անունով անուանելու և պարծաթմանակ, 25 կամ 27 տարի ֆրիատոսէ առաջ. ուր արդ կը հանգչի Վիկտոր Էմմանուէլի մայրիկն: Այս հիւանդի շէնքն իւր ճարտարապետութեամբ, և անթերի պահպանութեամբ, ամրութեամբ և ձևոց վայելչութեամբ, մասանց շնորհալի կանոնաւորութեամբ՝ հռովմէական հնութեանց երեւելաւորն յիշատակներէն մին համարուած է:

Ագրիպպաս կը փափաքէր այս տաճարս նուիրել Աւգոստոսի, այլ որովհետև Աւգոստոս յանձն շառաւ, ուստի Ագրիպպաս ալ նուիրեց զայն Արիսի և Արամազդայ՝ ի յիշատակ յաղթութեան Աւգոստոսի ընդդէմ Մ. Անտոնիոսի և Կլէոպատրայ:

Նուիրեց նաև Կիրքէի, մօր ամէն աստուածոց, վասն զի այս տաճարիս մէջ ամէնքն ալ իրենց արձանը ունէին:

Տրայիանոս և Կոմոդոս կայսերաց ժամանակ մեծապէս փնտռեալ լինելով երկու անգամ հրդեհէ, նորոգեցին զայն Ագրիպպաս, Անտոնիոս, Ս. Սեւերոս և Ա. Կարակալլա կայսերք:

Եթէ աստիճան պէտք էր վեր ելլել կամարադուրդ քաւիթը հասնելու համար, և այսու աւելի ևս փառաշուք կը թուէր. բայց արդ այս աստիճաններն հողով ծածկեալ են: Կամարադուրդն՝ տասն և վեց միաձոյլ կճեայ սիւներով զարդարեալ է կորնթական ճարտարապետութեամբ ամէնքն ալ. ութ՝ ճակարի վրայ, որք զգասակ շինուածոյն կը զարդարեն, որոյ վրայ կը հանգչէր կիսաքանդակ մը յանազապղնձոյ, որ կը ներկայացընէր զԱրամազդ՝ զհսկայս շանթահարեւոյ գրից մէջ:

Ձեղուն գերանքն անազապղնձով ծածկեալ էին, զոր Ուրբանոս Ը վերուց՝ վատիկանու մայր եկեղեցւոյն ամպշովանին և պապական սեղանոյն սիւները կազմելու համար:

Ըստ Տորրիկեայ՝ որ ներկայ էր անազապղնձոյն տեղափոխութեան, 450,251 հռովմէական լիպրէ կը կշռէր, և գամբը միայն 9,374 լիպրէ: Նոյնպէս և Գմբէթն և կամարապարդն ոսկեզօծ անազապղնձոյ թիթեպներով ծածկեալ էին՝ զորս 673ին Կոստաս Բ, ի Կ. Պօլիս տանելու համար վերուց, ուր չհասան. վասն զի Սարակինոսը յափշտակեցին:

Ի մուտս տաճարին կողմնական երկու մեծ խորշից որմունքն, հանդերձ մէկ քառակուսի վիմակառուց սիւնէն միւսն եղած որմամբք՝ մարմարաւ ծածկեալ էին. այս խորշերէն միոյն մէջ Աւգոստոսի արձանը գրուած էր և միւսին մէջ Ագրիպպայն:

Մեծ կամարազարդին մէջտեղն յանագապղընձոյ գոռն է՝ զոր հինն կը համարին, յայլ և այլ ժամանակս նորոգեալ. և աստի կը մոնենմբ ի տաճարն, որ կը հիացընէ իւր մեծ վայելչութեամբն և գեղեցկահիւսչաւ փակցութեամբ մասանցն:

Ներքին տրամագիծն՝ հաւասար բարձրութեան Պանթէնի՝ 42, 90 մեդր է: Աւագ խորանին բեմն որմափոր կիսաբլորակէ մը կազմըւած է, և իւր մեծ կամարն հաւասար է մոից դրան կամարին և ամբացած է երկու գեղնաքոր մեծ սիւներէ:

Տաճարին չորս կողմն նոյնպէս որմնափոր վեց մատուռք կան՝ եւ բեք ի մի կողմն. իւրաքանչիւրն երկու քարեղէն սիւն ունի և երկու կորնթական՝ միակտուր և խողովականման: Այս հատ մանիշակագոյն են՝ չորս՝ գեղնաքար, իսկ խարիսխքն և գլուխներն մարմար:

Թէ այս սիւններն և թէ վերոյիշեալ չորս քարեղէն երն հաստատուն կը բռնեն կողմնական վսեմաշուք պսակ մը՝ որ չորս կողմն կը պատէ. իսկ վերն կայ ուրիշ մ'ալ՝ աստիկեան ճարտարապետութեամբ և ունի տասն և չորս պատուհան՝ ոմանք որմնափակ. և վրան կը հանգչի մեծ կամարն:


Կամարն զարդարուած է հինգկարգեան քառակուսի արկղանման հատուածներէ, որոնք ծածկուած էին, կ'ըսեն, արծաթեայ թիթեղներով և ոսկեզօծ անագապղընձոյ վարդապսակներէ: Կճեայ զարդերուն տակ կը տեսնուին յիւրախ անագապղընձոյ խոշոր նեցուկներ, որպէս զի զվարդապսակները հաստատուն պահեն. բայց բարբարոսաց աւերմունքն և ժամանակին տգիտութիւնն այնպիսի զարդերը քանդեցին: Բեմին մէջտեղն Արամազդայ հսկայանման արձանն կանգնուած էր, որում և տաճարն իսկ նուիրեալ էր: Հին ասոն այս շինուածոյս չի՛ակալքն անբնակ էր, և յետուստ կողմանէ միայն կը միանար Ագրիպպայ շինել տուած փառաւոր բաղանեաց հետ: Առջին ընդարձակ հրապարակ մ' ունէր, և շէնքն կը բարձրանար քառակուսի հիման մը վրայ, որոյ վրայ ուրիշ բոլորակ մ'ալ կար, ինչպէս կը տեսնուի արտաքուստ ալ կողմ, ուր մաս մը շինուած և մաս մը մերկ է:

Շէնքին արտաքին կողմն թրժուն աղիւսներով շինուած է, և եռակարգ ամենահաստատ կամարներէ կազմուած, որոնք իրարու կցորդեալ և վերադիր են:

Այս տաճարս իւր պահպանութիւնը պարտական է նախ երստան դիւանոսի, որ չթողոց կործանել. յետոյ Ոսորիոս կայսեր՝ որ արգիլեց հին շինուածոց քանդումը, մանաւանդ ճշմարիտ Աստուծոյ նշանիւրեմբը:

Այլ և այլ քահանայապետք ալ մասն ունեցան նորա պահպանութեան մէջ: Նախ վոնիփակիոս Դ. քահանայապետն, որ փոկաս կայսրէն տաճարս ընդունելով, 610ին՝ 13 մայիսի, հանդիսապէս եղւոթն Մարիամու և Մարտիրոսաց նուիրեց. ուստի և տաճարն կոչուեցաւ

Սուրբ Մարիամ Մարտիրոսաց, Յետոյ ուրիշ ֆառանայապետը նորոգութիւններ և յաւելումներ ըրին. բայց վերջին ժամանակներս իտալական պետութիւնն Հռովմ' մտնելով այս տաճարս իւր հին ճարտարապետութեան վերածնց, յապաւելով ամէն յաւելում :



ՐԱՑՖԻ

ՅԱԿՈԲ ՄԷԼԻՔ

ՅԱԿՈԲԵԱՆ

ԱճՖԻ ման ազգային ազդ որ մ'աւելցուց տարւոյն թաւքին մէջ : Ապրիլ 25ի շարադոյթ հետադիրն՝ տիրագին եւ երևոյթ մը տուաւ մշտապետը կղզւոյս՝ ի ծիծաղախոյ ծփանաց որորեալ զաւարի ափանց. և թէպէտ իազմովեզս՝ իւր անազան ժամադրութեան պատճառաւ՝ քիչ մ'աւելի օրէ քան զքոյրաթիւնը, բառարակութիւնս հանդիսապէս կը մտանակցի այս ազգային ազդն, այլ յառաջին վայրկենէ անտի հաղորդակից եղած է այնմ՝ յատուկ ցաւահցութեամբ ի դիմաց Միաբանութեանս յղեալ առ ազգացուն մերձադրապէս՝ առաջի մանացոյն յիշարելոյ մեծի վիճառանին, որ իւր

անշխիտեղի կոյնելով, ազգասէր և կրօնասէր Սոմաւելով, քաշարի Դաւիթ-Բէկով, Խաւովի յանդիմանական յիշատակութեամբ և այլ ևս գեղեցիկ երկատիրութեամբ, բոլորովին կամ գրեալէ բոլորովին անմիակ նանապարհ մի նորոգեց մեր տունը . . . զպատմական փառասանական :

Վիպասանութիւնն ինքն յինքեան կրպտուրի միանգամայն և զօրաւոր միջոց մ'է զմարդկային սիրտն ազնուացնելու. բայց քանի սակաւաթիւք են, որք բովանդակ ազգի մը անցեալ և ներկայ կեանքը, նորա յոյսն և ապագան՝ իւրեանց առին. դրած, գիտցոր և կարողացել են իրենց վէպերէն Բաֆֆիի նման սիրելի և օգտաւէտ ընծայել առհասարակ ամենայն դասակարգի ժողովրդեան : Այս, Հայ ազգին բովանդակութեան մեծ համակրանքը յինքն զրաւեց Բաֆֆի, որում յապաղաւ յին վկայ պիտի առնանայ անշուշտ այն անդրին՝ զոր կանգնել կ'առաջարկուի ի պատիւ հանգուցելուն : Միջոց զերազանց քան զհզծանելի մահաբանս, կը փափագենք որ կանգնի ամէն մէկ նայ անհասանելու սրտից մէջ այն նայրենի լաւութեանց արձանն, զոր և միակ նպատակ ունէր Բաֆֆի իւր գրութեանց մէջ. և այն ասան միայն կարող կը լինինք ասել թէ Բաֆֆի տակաւին չէ մեռած և նորա գաղափարական ի զարգացման չէ զարարած . . . :

ԽՄԱԿՈԲԻՆ